ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«05» ապրիլի 2024 թվականի N 610

ԱՎԱԳԱՆՈՒ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄԻՑ ԻՐԱՎԱՍՈՒ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԸՆՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Չարենցավան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 01-ի N 68-Ա որոշմամբ հաստատված Չարենցավան համայնքի ավագանու կանոնակարգի 96-րդ կետի, ***որոշում եմ.***

1. Չարենցավան համայնքի ավագանու 2024 թվականի ապրիլի 12-ին անցկացվելիք երրորդ նստաշրջանի հերթական թիվ 4 նիստին ներկայացվող նախագծերի քննարկման համար սահմանել իրավասու հանձնաժողովներ.

1.1 Ֆինանսաբյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողով

•/նախագիծ N32-Ա/ Չարենցավան համայնքի 2024 թվականի բյուջեի առաջին եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականի մասին:

•/նախագիծ N33-Ա/ Չարենցավան համայնքի 2024 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին:

•/նախագիծ N34-Ա / Չարենցավան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 104-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

1.2 Կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողով՝

• /նախագիծ N35-Ա/ Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) հատվածից գումար հատկացնելու մասին:

1.3 Քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության և ենթակառուցվածքների մշտական հանձնաժողով՝

• /նախագիծ N 36-Ա/ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանները նվիրատվության եղանակով վարձակալին օտարելու համաձայնություն տալու մասին:

•/նախագիծ N37-Ա/Սեփականության իրավունքով քաղաքացուն պատկանող հողատարածքի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության թույլտվություն տալու մասին:

•/նախագիծ N38-Ա/ Քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող շինությունների զբաղեցրած հողատարածքներն ուղղակի վաճառքով օտարելու մասին:

•/նախագիծ N39-Ա/ Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքները աճուրդային կարգով օտարելու թույլտվություն տալու մասին:

• /նախագիծ N40-Ա/ Քաղաքացու անվամբ գրանցված 07-008-0201-0442 կադաստրային ծածկագրով 0,2006 հա գյուղատնտեսական նշանակության վարելահողերը համայնքային սեփականություն ճանաչելու մասին:

1.4. Իրավա-հասարակական հարցերի մշտական հանձնաժողով՝

• /նախագիծ N41-Ա / Չարենցավան համայնքում իրավական հսկողության արդյունքում բացահայտված թերությունների և դրանց վերացման ուղղությամբ տարված աշխատանքների մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**